


ԲԱՏՈՒԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՂԱՆԴԻ ՀԱՆԴՀԸԸ



Այս տարուան կաղանդի տօնը յիշատակալից օր մը եղաւ բատուայի Հայ Ուսանողութեանս համար՝ որ կը տօնէր յիշատակը աղետալի դարերուն որոնց կ'անցնէին 1918-ի հետ, և մեծ դարագլուխին՝ որ նոր-Տարին կը բերէր իր հետ:

Ազգային շունչով կազմակերպուած այս հանդէսը շատ շքեղ կերպով տօնուեցաւ, կը նախագահէր անոր իրրեն ներկայացուցիչ Միակիթարեան Միարանութենէ վեր։
Հ. Սահակ Տէր-Մովսէսեան։

Նուրբ ճաշակով պատրաստուած էր ծաղկալից սեղան մը։

Միջավայրը զուտ հայկական էր ուր կը տիրէր ազգային հոգին և ազգային լեզուն։ Ուսանողական նուազախումբը կը զուարթացնէր հանդէսը զանազան կտորներով։ Երգուեցաւ եռանդագին «Բամ. փորոտան» ու ուրիշ ազգային տաղեր ու քայլերներ, որոնք այս անգամ աւելի խանդավառ դուրս կուզային մեր կուրծերէն։

Յարգանք և երախտիք՝ կը շարժէին մեր հոգիները դէպի մեր հին և նոր գործիշները, որոնք դարերու արկածալից յեղացրջումներու մէջ, անխախտ պահեցին տոհմային ամէն աւանդութիւն, և ապահովեցին հայութեան վերջնական փրկութիւնը։

Ուսանողական միութեան զրեթէ ամէն անդամ այս առթիւ բաժականառ մը խօսեցաւ զանազան ներջնչումներէ առաջնորդուած։ Յիշատակութեան արժանի է մասնաւորապէս Միութեանս Ատենապետ Պ. Պատիկեանի ճառը որ Միութեանս անուամբ շնորհակալ եղաւ վեր։ Հօր յարգոյ ներկայութեան, և երախտեաց թարգման եղաւ բոլոր Միակիթարեան հայրերուն ու Բարերարաց Մուրատի և Ռաֆայելի։ ապահովելով որ Միութիւնն իր սրտին մէջ վառ պիտի պահէ անոնց անմահ յիշատակը, և անոնց ուխտը իրազործող տարը մը պիտի

ըլլայ, թէ՛ իր ներկայ գոյութեան միջոց և թէ ապագայ ազգօգուտ ձեռնարկներու մէջ, երբ գիտութեամբ զեռ աւելի լուսաւորութիւն կրացնչիւր ընկերի միտքը։

Ատենապետի ուղերձը կ'արձագանգէ ամէնուն սրտերու մէջ։ Ազա Մաթոսեան, Զիրէքնեան, Արփիարեան, Փիլիպպոսեան և այլը իրենց արձակ կամ ուսանաւոր գրութիւններով կը հաստատեն Ատենապետի խօսքերը, թէ՛ իրենց մտցերն ու հոգիները պիտի ծագին միակ մեծ հայրենիքի մը՝ այն մաքուր հայրենիքին՝ որ Լուսաւորիչն ու Միխիթար իտէաներու կայան մ'ըրին։

Յետոյ խօսքը առաւ Պ. Մ. Խանպէկիան և խանդավառ շեշտով արտասանեց հետեալն։

Վեր. Հայր և Արքիլի ընկերներ,

Մինչև ցարդ մեզ համար բերկրանքի ո՛ւ և կ ցոյց եղերուած էր սե և տիտուր երիզով մը, ու մենց կ'երգէնց զանոնորէն և գանգատող հոգերանութեամբ՝

« թէ հայրենեաց պատկազիք Գողթան ընարք լոեր են »,

ու անոնց հետ մեր կուսական քոյրերու քաղցրահնչիւն ձայներն՝ որոնց հայրենի բուրաստաններու մէջ կ'երգէին անմահութիւն և սէր մեր դիւցազներուն, մեր հերոսներուն։ Մինչ մեր հայեացը ձգած դէպի մեր Մայր Հայաստանը, սգաւոր կը տեսնէինց նէրա խոր վէրցերը, որոնց զառն էին այնպէս ինչպէս Գողգոթային վրայ խաչափայտին ստորոտը ողբացող Աստուածամօր դառնակակիծ վշտերը։

Սակայն այսօր ժամանակը եռանդու, գործունեայ խմբումը մտցերու, և նորանոր աշխարհայեցողութիւններ արբեցուցեր են մեզ ամէնցը։

Այսօր ամէն տեղ պարզուած է իր վիթխարի բարախումներով հայկազեան զրոշը որուն յայթական և լայնարձակ ծածառ նումներուն ներք զինկիզ-թանի և լէնկթիմուրի վամբիր սերունդներու դարեր անարդարութիւնները հարստահարութիւնները և բռնութիւնները վերջապէս ոտնակոխ ըրած, մեր ազգը կը քալէ իր Ազա-

տուքթեան ճանապարհէն դէպի բարեկեցու, թեան նորանոր և վարզահեղեղ հորիզոնները :

Այս բոպէին, սիրելի ընկերներ, թող պահ մը մեր մտրեն ու հոգինեղը սաւառնին հայրենի բարձրաւանդակներուն, արիւնու բլուրներուն ու հովիսաներուն վրայէն, ուր մեր հանդարտ և իմաստուն ծերունիները մեր գորովալից հայրեն ու մայրերը մեր խոշտանգուած բոյրերը մեր մատաղ մանկիկները զոհուեցան հարիւր հազարներով, լուսաւորելու հայրենի խորանն իրենց սուրբ հոգիներով, ինչպէս յափտեական անշէջ կանթեղները : Յարգանց անոնց :

Յարգանց մեր կամաւորներուն, որոնք ըմբռնած այս ճգնաժամի բոտէներու վեհ հութիւնը խոր կերպով քանդակեցին իրենց կուրքքերուն վրայ՝

« Գոնէ մեր կեանցը մահով յետ խլէնց Ու այնպէս լենց » :

Յարգանց մեր հին և նոր դիւցաներուն Հակայ Հայկէն կարմիրն վարդան, Վարդանէն Անդրանիկն Քաջ :

Յարգանց Աւարայրի դաշտին, Սամսոյ լեռներուն և Միքանայ սարերուն, ուր Պարսիկ կրակը և Տաճնիկ սուսերն ու մահիկն այս երկու պատուհաններն հայութեանվերջի վերջոյ փշուուցան իրենց պատուան գաններով միասին մեր տոհմային աւանդական և դարելոր վրէժի սուրբ փոթորկէն, ու այսօր անոնց մոխիններուն վրայ կը բարձրանայ լուսապայծառ Հայոց արքին :

Թող արթնանան այժմ մեր վաղեմի աւշուղները անմահացնելու վերածնունդն Հայոց :

Արդ ես կը նշմարեմ հրդեհումը այս մեծ կրակին՝ որ Միթթարայ երկհարիւրամեայ երազն այսօր կ'արծարձէ ամբողջ հայ սրտերուն մէջ, մինչ մեր բարերարաց Մուրատի և Ծափայելի անմահ հոգիները կը մըմջէն մեզ անդրշիրմեան աշխարհէն — թւմբր հայ պատանի յօգուտ ազգութեան: Տես կը սպասեն քեզ աւերակներն Անիի: Տես կը սպասեն քեզ արդ ամա-

յացած յուրիթի ափերն Արաքսի, Եփրատի և Տիգրիսի: Տես կը սպասեն քեզ Հայոց խոպանացած երրեմնի կանաչ լեռներն ու դաշտերը. ստեղծիր հոն եռուզեռն երրեմնի որ կը կապէր արևելքն արևմուտքի հետ, իր լին մերս Հայաստան :

Մեր բարերարաց ֆառաւոր անցեալով ոգերած զարձընենց պահ մ'ալ աշեքենիս երախտափտական զգացումներով դէպի այն վեհանձն հայուն՝ Պօղոս Նուպար Փաշային որ այս համաշխարհային փոթորկի անձկութեան օրերուն Նախարինամական ներշնչումով զիտցաւ ղեկավարել մեր փրկութեան նաւակը և առաջնորդել զայն դէպի խաղաղ ափունը Ազատութեան րնաշխարհն: Կեցցէ ինըն և իւր գործն անմահ: Այսուհետև թող հնչն մեր զանգակներն իւրնդազին Արագածէն ցջաւրու, Աղթամարէն ի Ս. Ղազար, զի հասած է ժամն փրկութեան զարմին թորգումայ:

Կեցցէն Միթթարեան Հայրերը,

Կեցցէն Հայ կամաւորները

Կեցցէ Ազատն Հայաստան:

Այս զգացութերով իսանդավառուած վերցնենք ուրիմ այս բաժակներն Հայ ազգի վերածնութեան և ի շնորհակալութիւն Հ. Սահակ վարդապետին որ պատուեց իւր ներկայութեամբ մեր համախմբութիւնն իրը ներկայացուցիչ Միթթարեան Միարանութեան:

Հազիւ ճառախօսն աւարտեց իւր ուրկերձն Վ. Հայր նախագահն զեկեցիկ բաժականուով բացատրեց իւր վառ միտքը որ մնած է հայ պատութեամբ: Հայրենասիրի ամենէն զգայուն ներշնչումներով, ցուցուց թէ որոնց են նոր Հայաստանի մը հանդէյ նոր սերունդին պարտըը: Երաշխաւորելու համար ազգային գոյութիւնը, երբ զարերու յառաջդիմութենէն զատ, մեր ազգը կը մտնէ բարդարակիր ժողովուրզներու շարքին մէջ, վերստանձնելու այն դիրքը որ երկար ժամանակ մերժուեցաւ իրեն: Կը սիրէ յօսաւ որ Միթթարեան դաստիարակութեամբ կը ըրթուած Մուրատ-Շափայեկանի նոր սաները ազգասէր և գործունեայ մտցերու

զանգուածը պիտի ստեղծեն նոր շլչան-ներու մէջ նոր յառաջադիմումներու, ինչ-պէս հիները եղան առաջին ջահակիրները, Միթթարեան կենսատու շողերը սփոնելու հայրենիքի մէջ երբ հոն դեռ կը տիրէր ըս-պաննող մթութիւնն։

Կը մաղթէ ամենուն մտային, ֆիզիքա-կան քաջողութիւն, ուսմանց յառաջդի-մութիւն և նպաստակներու իրազործում։

Երբ ճառը կը վերջանար եռանդուն ծա-փերու մէջ, կը լսուէին մօտաւոր Ս. Ան-տոնի աշտարակին խորհրդաւոր կէս գի-շերին տասնուերկու դանդաղ հարուածներու, կը մեռնէր հին տարին և կ'անցնէր իր յաւիտենական լուութեան մէջ։ Կը ծնէր հաշտութեան, եղրայրութեան և Ազատու-թեան Նոր-Ճարին։

Ս. ԽԱՅՊԷԿԱՆ
Քժէկ. Ալսանող

Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը՝ այս տարի և համալսարանական բարձրագոյն դասընթացներու կը յանձնէ ուրիշ վեց ուսանողներ ալ որոնց անցեալ թու-մեսի շրջանաւարտներն են։

Պետրոս Փելքպոսեան-Եւղոկիացի-Բժշկութիւն։
Արիս Հնամէիմեան-Ա. իշխանցի »
Մկրտիչ Մամեէեան - Տրապիզոնցի - Ճարտարարուեստ- գիտութիւն (Tugeregnaria)
Եղուարդ Գոնսացձեան-Լարնացի »
Արամ Հմբրգէ-Իզմիրցի »
Ցովհաննէս Կիւրեղեան Պօլսեցի »

Այսէնցն արձանագրուած են Բատուայի համալսարանին մէջ ուր արդէն սկսած են դասընթացը եռանդնալից և ջանաէց։

Այս ժողորդիկ իւրաքան ալ կուզայ ստուարացնել չայ Ուսանողական Միութիւնը։

Ցուառվ ենք որ կեանքի զառն և կանխահամա ժորժա-ռութեամբ սկսող այս ուսանողները զիտակից են իրենց պարտքերուն և պիտի համապատասխանեն մեծ սպա-սութերուն։

Կը մաղթէնց իրենց երջանիկ ոկիզըն և յաջող վերէ.

Ճ Ճ



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ



ՄԻ ԳԱՆԻ ՄԵԾ ԳՐԱՂՆԵՐՈՒ
ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՂԱՄԱԿԻ

...>><...

Հետարքրական է միշտ քաջ արուես-տաւոր մը դիտել աշխատած ժամանակ, նա մանաւանդ երբ նա զրադուած է ան-ման գործի մը ստեղծման։ «Ե՞րբ, ուր, ինչ տպաւորութեանց տակ ծնան զլուի գոր-ծոցները, որ այնքան հիացումն կ'ազդեն յին։» Ամեն մոտացի ընթերցող, ինքնիրեն անշուշտ ստէպ այս հարցումս տուած է, և Գէորգ Դուկլաս, Զէմբէրս օրազրի մէջ (պրակթ) գոհացումն կու տայ այսպիսի հե-տարքրութեան, խօսելով մի քանի Գաղ-զիացի և Անգլիացի բանաստեղծներու և Վիպասաններու մասին, որոց մեծ մասն առատ նիւթ զանձեր են հրապուրիչ և մոգիչ իտալիայէն։

Բայրըն, Բլլլէլը, Գոտիլէ։

Բայրըն, ժամանակ մը կերակրուեցաւ չամիչով և սէլցի ջրով, միտքը զնելով, ինչպէս կ'երմի, որ այս կերպ պանցեցութիւնն, նպաստաւոր է զաղափարներու բողոքման։

Բըլվէր, կէս գիշերի մօտերը կը զգար երեկակյութեան տաքանալլը, սկերով պա-տուած անկողնոյ մէջ։

Բայց աւելի բնորոշ տիպար մ'է Թէէու-փիլոս Գոտիէ, վիպասանական ժամանակի ամենցից աւելի երեկայալից և ճարտար գրողներէն մին։

Նորա բարեկամն Մասիմո զիւ կան կը պատօնէ թէ ինչպէս նա զից իւր համբաւաւոր ձանապահորդուրինն յիտալիա։ «Պի-տի ասեն որ այդ զիրքը զրուած է ամենա-լորջ առանձնութեան մէջ, իրեն տրամա-դրելի հարուստ մատեաններով զրատան մը մէջ, աշքի առաջն ունենալով քաղաք-ներու յատակագիծն և ամենանշանաւոր թանգարաններու ցանկերն անգամ։ Ինդ հակառակն նա իւր ծնունդն առաւ տպա-